

միջնադարյան տաղերգուները գրաբարով բանաստեղծություն չեն գրել: Հետուն չգնալու համար հենց բերինք Հովնաթան Նաղաշի գործերից՝ կրոնական բնույթի բանաստեղծություններից մի նմուշ՝ մարուր և կոկիկ գրաբարով գրված:

«Տանմարմնոց վերօրհնեալ
Մարիամ կոյս գովեալ,
Ես եմ մեղօքս մեռեալ
Յարո զիս և բեկալ:
Ոսոխն այն սրտմանալ
Մահահօր դան զսրծեալ
Յանցիւ զիս յմբոնեալ
Սպենա ինձ կոյս օրհնեալսլ:

Գրքի մի շարք տողերում կան կրկնություններ, օրինակ՝ 24 էջում 3-րդ տողը և 15-րդ տողերը: 60-րդ և 91-րդ էջերի մեջբերումները՝ «խապար ևս զրկել տանեն» և այլն: 90 և 91-րդ էջերի մեջբերումները՝ «Ասել ևս թե «նա ուր նաղաշ է» և այլն:

Մեղուշտ աշխատությունը շահած կլիներ, եթե զերծ լիներ վերոհիշյալ թերություններից:

Նյութի ուսումնասիրությունը կատարված է բարեխղճորեն ու բազմակողմանի: Հովն. Նաղաշի վերաբերյալ մինչև օրս մենք մի ամփոփ, ամբողջական գործ հրատարակված չենք ունեցել: Եղածներն էլ հոգվածներ են, ոչ ամբողջական և շատ վաղուց գրված, իսկ նորերն էլ լրիվ ու ամբողջական գաղափար չեն տալիս Նաղաշի մասին: Այս ամբողջական ու մատչելի գործի հրատարակությամբ մեր բնթերցող լայն հասարակությունը լրիվ ու ամփոփ պատկերացում կարող է կազմել միջնադարյան հշանավոր բանաստեղծ և նկարիչ Հովնաթան Նաղաշի մասին:

Գր. Հակոբյան

Հ. ԱՆԱՍՅԱՆ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ»

1953 թ. լրացավ Գոստանյունուպոլսի առման 500-ամյակը, որը պատմական խաշոր իրադարձություն է՝ և ծանր տալավորություն է թուղել բաղադրակիրը՝ աշխարհի վրա: Հ. Անասյանի վերջերս հրատարակած գիրքը՝ «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին»² ճիշտ է, ուշացած, բայց տեղին և արժանավոր արձագանքն է այդ տխուր դարադարձի:

Հ. Անասյանը դիտական հասարակայնությունն է ներկայացնում Արաբհամ Անկյուրացու, Աբաբել Բադիշեցու և Երևմիա Չելեպի Քյումուրճյանի պատճառական ողբերի համեմատական տեքստերը Կ. Պոլսի անկման մասին հետաքրքիր առաջաբանով և մանրամասն ու կարևոր ծանոթագրություններով:

Բյուզանդիայի արտաքին քաղաքական դրությունը և ներքին սոցիալական ջլատող հակասությունները նրան կանգնեցրին անկման եզրին: Մուհամմեդի հաղթական հաջորդներն արդեն սկսել էին նվաճել Մերձավոր Արևելքը և Բյուզանդիան մինչև էր միակ պատվարը, միակ նեղուկը թուրքական հոսանքի դեմ:

Փոքրասիական ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, որոնք արդեն մասամբ նվաճվել էին թուրքական հարդաների կողմից և դառնում էին բնահանուր նվաճման վտանգի տակ, իրենց հայացքը հառել էին Բյուզանդիայի վրա և նրանից էին տկնկալում իրենց փրկությունը:

¹ Լեո. Հայոց պատմություն, հատոր 3, էջ 384:

² Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1957, էջ 147:

Կոստանդնուպոլսի անկումը մեծ հուսախաբություն առաջացրեց և հայ ժողովուրդն այդ վերապրեց իբրև սևփական կորուստ։ Տարբեր հասարակական խավերի ներկայացուցիչներն առաջ էին յերում տարբեր տեսակներ և արտահայտում իրենց ազատագրական երազը հատկապես տեսիլների մեջ, հիշատակարաններում և պատմական ողբերում։ Այս հարցերին է նվիրված գրքի սեղմ և բովանդակալից առաջարանը։ Հ. Անասյանը հենվելով Բաղիշեցու և Անկյուրացու տեքստերի վրա, ցույց է տալիս, որ նրանք երկուսն էլ, ողբալով Կոստանդնուպոլսի անկումը, ունեն ազատագրական հույսերի երկու տարբեր դիրքորոշում և ներկայացնում են հայ հասարակական կյանքի տարբեր հոսանքներ։

Անկյուրացու և Բաղիշեցու տեքստերը այդպիսով կարևոր նշանակություն են ստանում հայ ազատագրական մտքի պատմության համար։

Առաջաբանում համոզվեր ձևով ներկայացվում է այն ընդհանուր քաղաքական միջավայրը, որ ծնունդ տվեց Բյուզանդիայի վերջին կայսեր՝ Կոստանդին Դրադասի Հռոմ ապաստանելու լեզենդին։

Կ. Պոլսի անկումով ստրկացված ժողովուրդների պայքարը չէր դադարում։ Այժմ ընդդիմադիր ուժերի կենտրոն է դառնում Հռոմը՝ պապականության օրոպներ, որն իբր պետք է խաչակրական նոր արշավանք ձևոնարկելու և «երկրորդ Երուսաղեմը», կամ «նոր Հռոմը» ազատագրեր թուրքերից։ Բյուզանդական ազգային կուսակցությունը, որը հույսեր չէր տածում Եվրոպայի հանդեպ և դառնում էր, որ պետք է սեփական ուժերով փրկել երկիրը, արդեն գինաթափ էր եղել և դրա հաշվին զորեղացած լատինասերների կուսակցությունը ավելի էր դարձել տալիս այդ պաղատիարին։

Պատմական աղբյուրների ցուցումով Դրադասը սպանվել է Կ. Պոլսի աշտարակային ժամանակ։ Բայց ահա, դեպքերին ականատես հայ ողբերգուն՝ Աբրահամ Անկյուրացին գրում է իր ողբի մեջ.

Ոմն ի յաղոաջըն Ֆրբանկին,
որ դափուտան անուանէին,
Առեալ զթագւորն և զմեծամեծս
Նաւով փախեաւ վերայ ծովին։

Անկյուրացին չէր կարող կեղծել։ Նա պարզապես անգիտակցորեն տուրք է տալիս լատինասերների կամ արևմտականների կողմից հատուկ դիտավորությանմբ հերյուրված դրույցին, ըստ որի թագավորն անցել է Հռոմ։ Այդպիսով ոչ թե պայքարը դադարեց, այլ այն շարունակվելու է, բայց այս անգամ Հռոմից։ Հռոմը դառնում է կենտրոն։

Լեզենդը պատմական հիմք չունի, բայց այնուամենայնիվ լայն տարածում ստացավ, դառնելով պարարտ հող, այնպես որ Աբրահամ Անկյուրացին, որը չէր համարում արևմտականներին, այդ ընդունում է իբրև ճշմարտություն։ Թուրքական ստրկության տակ ընկած ժողովուրդները դրա մեջ հույսի նոր առկայծումներ էին նշմարում։ Հ. Անասյանը լեզենդի մասին հայկական աղբյուրներից մի այլ հիշատակություն է բերում։ Դավիթ խարբերգցին պատմելով նախորնիաց դեպքերը, շարունակում է. «Իսկ պատրիարքն և թագավորն... մտեալ ի նաւ մի մեծ և բազում ժողովրդեամբ իբրև քսան հազար արամբ փա-

խրատական գնացին ի Հոռվմ և տարեալ զամենայն սրբութիւնսն ի հետ իւրեանց»:

Թագավորի Հոռմ ապաստանելու լեզենդի մասին բացի հայկականից մյուս աղբյուրները լռում են: Ինչպես երևում է, այլ հիշատակություն չի պահպանվել: Դա ինքնին բարձրացնում է այդ աղբյուրների արժեքը և հետաքրքրություն է ներկայացնում առհասարակ բյուզանդագիտության համար:

Հ. Անասյանն Աբրահամ Անկյուրացու, Առաքել Բաղիշեցու և Երեմիա Չելեպի Քոմուրճյանի տեքստերը դիտել է իբրև պատմության աղբյուրներ և այլպես էլ ներկայացնում է առաջաբանի մեջ: Բայց դրանք ունեն նաև գրական նշանակություն: Ինչպես հայտնի է, պատմական ողբը, իբրև գեղարվեստական առանձին սեռի ստեղծագործություն, ծնունդ առավ Ներսես Շնորհալու նշանավոր «Ողբ Եդեսիոյից» հետո: Դա մեր գրականության մեջ բավական լայն տարածում գտավ, որովհետև գեղարվեստական այդ ձևով առավել մեծ հնարավորություն կար արտահայտելու արտաքին ճնշման տակ տառապող ազգի վիշտն ու ոգորումները: Հայտնի են Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի սուրբ Կաթողիկէ էջմիածին», Խաչատուր Կեղանցու «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան», Մրնաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրին հայերուն», Ստեփանոս Թոխաթեցու «Ողբ և ուտանաւոր տաղ ի վերայ Եդոկիա մեծ քաղաքին», որ այժմ Թոխաթ ասի», Հակոբ Թոխաթեցու «Ողբ ի վերայ Եդոկիա քաղաքին», Մարտիրոս Ղրիմեցու «Ողբ Երեմիա մարգարէին» և այլն: Անկյուրացու և Բաղիշեցու ողբերը լրացնում են այդ շարքը և նյութ են տալիս ողբի իբրև միջնադարյան գեղարվեստական սեռի ապագա ուսումնասիրողին:

Ժողովածուում Անկյուրացու և Բաղիշեցու ողբերը համահավաք, համեմատական տեքստեր են: Առաջին բնագրի համար օգտագործված է 17, իսկ երկրորդի համար 15 օրինակ:

Երեմիա Չելեպի տեքստը վերցված է մի ձեռագրից և կազմում է «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, որ սուլթան Օսմանէն մինչև այսմ սուլթան Մուհամէտս ԺԹ թագաւորք են» աշխատության մի մասը:

Ողբերի բարեխղճորեն և գիտական ճիշտ սկզբունքով կազմված համեմատական տեքստերը նմանօրինակ աշխատանքի օրինակելի նմուշ կարելի է դիտել: Կատարվել է ընթերցումների խիստ ընտրություն, տողատակերը չեն ծանրաբեռնվել ավելորդ, վրիպակային տարբերակներով, որի շնորհիվ դրանք բեռնաթափվել են մոտավորապես հինգ անգամ:

Գրքում առաջաբանն ու բնագրերը ներկայացվել են նաև ուսուցիչական թարգմանությամբ, որը կատարել է Ս. Արևշատյանը: Դա հնարավորություն է տալիս դիրքը տրամադրելու ընթերցող ավելի լայն հասարակայնությանը:

Հ. Անասյանի այս փոքրիկ աշխատասիրության մեջ ակնբախ կերպով երևում է նրա լուրջ, բարեխիղճ ու հոգատար վերաբերմունքը գործի նկատմամբ, նյութի լավագույն ճանաչում և մատենագիտական հմտություն:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

